

## Ա. ՅԵԿՈԲԻ ՆԵՐՍԵԿԻՆ

ՀԵՌԱԱԳԻՒԹԻՒՆԵՐ

Դեր. Տեղապահ Հայրը Ս. Զատկի սօնին  
առքիւ (Նոր Տօմար) նետեւեալ ընորհաւորա-  
կան նեռագիրը յլած է Ամենայն Հայոց Վեհ.  
Հայրազե Տ. Տ. Գեորգ Զ. Մրբազնագոյն  
Կարողիկոսին.

ՆՈՐԻՆ Ս. ՕՇՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.  
Մրբազնագոյն Կաթողիկոս Ամենայն Հայոց  
ի Ս. Էջմիածին

Ի դիմաց Ս. Յակոբեանց Միաբանական  
Ուխտին եւ համայն հաւատացեալներուն  
կը ներկայացնենք Ս. Զատկի շնորհաւորու-  
թիւններ մաղթելով Զեր Ս. Օծութեան եր-  
ջանիկ եւ երկար կեանք եւ բարգաւաճում  
Հայց. Ս. Եկեղեցին եւ պանծալի Հայրե-  
նիքին ու սիրեցեալ ժողովուրդին:

Տեղապահ Առաք. Ս. Աթոռոյ  
ԵՂԻՇԼ ՎԱՐԴԱՊԵՏ

23 Մարտ 1951, Երուսաղեմ

Նոյն առիրով նետեւեալ նեռագիրը ուղ-  
ղուած է Ս. Արուոյս մեծանուն բարերար  
Վասիլ. Գալուստ Պետքանկեանին.

ՆՈՐԻՆ ՎԱԵՄՈՒԹԻՒՆ  
ԳԱԼՈՒՍՏ ՊԵՏՔԱՆԿԵԱՆ

Լիզալոն

Ի դիմաց Ս. Յակոբեանց Միաբանական  
Ուխտին եւ Սաղիմահայ շնորհընկալ ժողո-  
վուրդին, կը ներկայացնենք Զերդ Վասիլու-  
թեան, Ս. Զատկի տօնին առթիւ, երկար  
եւ երջանիկ կենաց մեր սրտագին մաղթանք-  
ները :

Տեղապահ Առաք. Ս. Աթոռոյ  
ԵՂԻՇԼ ՎԱՐԴԱՊԵՏ

23 Մարտ 1951, Երուսաղեմ

Դեր. Տեղապահ Հօր սոյն ընորհաւորա-  
կան նեռագրին ի պատասխան՝ սացուած է  
նետեւեալ նեռագիրը, Վասիլ. Գալուստ Պետ-  
քանկեանին.

ԳԵՐ. Տ. ԵՂԻՇԼ ՎԱՐԴԱՊԵՏ. ՏԵՂԻՇԼԻՐԵԱՆ

ՏԵՂԱՊԱՀ ԱՌԱՋ. Ս. ԱԹՈՌՈՅՑ  
Ս. ԵՐՈՒՍԱՂԵՄ

Յանձնաբարուած եմ Վասիլ. Գալուստ  
Պետքանկեանին, յայտնելու Զեզ եւ  
Պատ. Միաբանութեանդ իր ամենազերմ  
շնորհակալիքը Զեր Ս. Զատկի շնորհաւորու-  
թեան համար, Նորին Վասմութիւնը սրտա-  
զինս կը փոխադարձէ :

Յարգալից բարեւներով  
ՅԱԿՈԲԵԱՆ

27 Մարտ, Լոնտոն

ԱՄՍՈՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

\* 11 Մարտ Կիր. — Բուն Բարեկենդան. — Մեծ  
Պահոց գակեալ-խորանի առաջին Ս. Պատարագը  
մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին  
մէջ, Պատարագին էր Հոգ. Տ. Յարութիւն Վրզ.  
Մուշեան :

— Կէսօրէ վերջ, ժամը 3.30ին, ի դիմաց Գեր.  
Տեղապահ Հօր Հոգ. Տ. Սուրէն Վրզ. Քէմճաճեան,  
ընկերակցութեամբ Տիար Կ. Հնինդեանի, տեղ-  
ույս Պապական նուրիսակ Գեր. Կիւսթանօ Տես-  
թայի հրաւերին վրայ, ներկայ գտնուեցաւ Ն. Վ.  
Պետրոս Ժի. Պապի գանակալութեան տարեղարձի  
առթիւ կատարուած գոհաբանական մաղթանքին  
և հիւրասիրութեան, Լատինաց Պատրիարքա-  
րանին մէջ :

\* 14 Մարտ Դշ. — Այսօր պաշտօնակէս սկսան  
Մեծ Պահոց յատուկ ժամերգութեանց կարգը ո-  
րուն կը նախագահէր Գեր. ՏԵՂԱՊԱՀ Հայրը :

\* 16 Մարտ Ռւր. — Երեկոյեան ժամերգու-  
թիւնն ու վաղուան տօնին նախատօնակը պաշ-  
տուեցաւ Ս. Աթոռոյս Գրչագրաց Մատունադա-  
րան. Ս. Թորոս Եկեղեցւոյն մէջ: Արարողութեանց  
կը նախագահէր Մատունադարանի Տեսուչը՝ Հոգ.  
Տ. Նորայր Վրզ. Պօղարեան :

\* 17 Մարտ Շբ. — Ս. Թէօրօգոսի օրավարին. —  
Առաւտեան ժամերգութիւնն ու Ս. Պատարագը  
կատարուեցաւ Մայրավանքի Ս. Թորոս Եկեղե-  
ցւոյն մէջ: Պատարագին էր Հոգ. Տ. Նորայր  
Վրզ. Պօղարեան, ու նաև քարոզեց նիւթ ունե-  
նալով օրուան սուրբին կեանքն ու նահատա-  
կութիւնը :

Յետ միջօրէի ժամը 2ին, Գեր. Տեղապահ Հօր գլխաւորութեամբ՝ հոգել վարդապետներ պաշտօնական երթով իջան Ս. Յարութեան Տաճար, որու մուտքին սկսաւ զգեստաւորեալ «Հրաշափառ» կարգը, Ապա թափօրը ուղղուեցաւ Քրիստոսի Ս. Գերեզմանը, որուն ուխտի արարուցութենէն վերը՝ թափօրը բարձրացաւ մեր վերնատան մասուառ ուր կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւնը և Նախատօնակը, ու ապա կատարուեցաւ Ս. Տեղեաց այցելութեան թափօրը, որմէ յետոյ Գեր. Տեղապահը և հոգեշնորհ վարդապետ Հայրեր վերադարձան Մայրավանք պաշտօնական երթով:

— Երեկոյեան արարուցութեան ընթացքին Գեր. Տեղապահ Հայրը սքեմաւոր ուրարակրութեան աստիճան շնորհեց Ժառանգ. Վարժարանի սաներէն Տիր. Պահան Գալֆաեանին:

— Յետ միջօրէի, ժամը 6ին, Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Տ. Ասողիկ Վրզ, Ղաղարեանին և Տիար Կարպիս Հինդլեանի այցելեց հիւրաբար քաղաքս գտնուող Rev. H. M. Waddams-ին (Church of England Council of Foreign Relations), Անկիլքան Եպիսկոպոսարանին մէջ:

\* 18 Մարտ Կիր. — Առաւտօնեան ժամը 5ին գլխաւորութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրզ. Գէմհանեանի հոգեշնորհ վարդապետ Հայրեր պաշտօնական երթով իջան Ս. Յարութեան Տաճար, Ս. Դողդոթայի ուխտէն յետոյ առաւտօնեան ժամերգութիւնը և Ա. Պատարագը մատուցուեցաւ Բ. Գաղգոթայի մեր վերնամատօրան մէջ, Պատարագին էր Հոգ. Տ. Միւռուն Վրզ. Կը ճիկեան: Իսկ ժամը 8ին, դարձեալ, պաշտօնական թափօրով՝ Գեր. Տեղապահ Հայրը մուտք դործեց Ս. Յարութեան Տաճարէն ներս: Յետ Ս. Պատարագին նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր և մասնակցութեամբ բովանդակ Միարանութեան և աշակերտութեան կատարուեցաւ օրուան մեծահանգէս թափօրը, խաչ ու խաչվաներով ու վառեալ մամեղէններով: Թափօրը Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջ երիցս դառնալէ յետոյ, անցաւ Ս. Պատանատեղին ուր օրուան աւետարանի ընթերցումէն եաք, թափօրը յառաջացաւ դէպի Ս. Գերեզման, ուր կարգացուեցաւ աւետարան ու երգուեցաւ «Տէր ողաբիմեա»: Ապա թափօրը յառաջացաւ զէպի վերնատան մեր մատուց ուր արարութիւնները վակուեցան Գեր. Տեղապահ Հօր օրհուութեամբ: Ապա Միարանութիւնն և ժողովուրդ չբերթով վերադարձան Մայրավանք:

— Թերեւս տարօրինակ թուի Ախոնի մեր ընթերցողներուն Մեծ Պահքի ընթացքին Հայ Երուսաղէմի մէջ կատարուող այս մեծահանգէս արարութիւնները, որոնց սկիզբն է այսօրուան արարութիւնը: Բայտ Հայաստանեաց Եկեղեցւոյ հնաւանդ սովորութեան Մեծ Պահք արարութիւնները կը կատարուին մեղքին սուզովը տիրացած գնացքով մը. Հայ Երուսաղէմի սունենալ, պարզապէս պահելու համար Ս. Տեղերէն ներս իրաւական — արարութական իրկար մը առանձնաշնորհումները, որոնք կը զու-

ղազիպին Մեծ Պահքի օրերուն: Այդ Հանգէսներէն այսօրուանը առաջինն է որ կը կատարենք, մեզի իրաւակից Յոյն և Լատին Պատրիարքութեանց հետ միասնարար, իրեւ տեսակ մը Մեծ Պահոց մատքի հանգէս: Այս երեք աղքերէն իրաքանչւոր, մեծակառոյց Տաճարի իրենց յատուկ բաժանուաներուն մէջ, այս Եարաթ և Կիրակի օրերուն կ'ունենան Հանգիսաւոր Նախատօնակ և Ս. Պատարագ, ու ապա Եռագարծ մեծահանգէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջ, յաջորդաբար, Նախ Լատինը, ապա Յոյնը և յետոյ Հայը:

Իսկ Մեծ Պահք Երրորդ Եարաթ և Կիրակիի Հանգէսը Ս. Յարութեան Տաճարէն ներս, առանձնայատուկ է միայն Լատին Պատրիարքութեան: Չորրորդ Եարաթն ու Կիրակէն Յոյն Պատրիարքութեան, իսկ Հինդկերորդը առանձնայատուկ է Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան: Այդ օր, մնաք, մեր կարգին կը մատուցանենք հանգիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, որմէ եաք կ'ունենանք մեծ ահանգէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջ: Իսկ Նախասորդ Եարաթ Երեկոյին Հանգիսաւոր «Հրաշափառ», ժամերգութիւն, Նախատօնակ և թափօր Տաճարէն ներս:

Այս բոլորէն յետոյ, Մաղկաղարդի տոնը կը կատարեն Երեք աղքերը զարձեալ միանդաբար, իրաւագանչիւրը առանձինն իրենց սեպհական մատուկներուն մէջ՝ օրուան յատուկ արարողութիւնները և Ա. Պատարագը ու ապա իրաւագանչիւրը իր կարգին հետզհետէ կատարելով Քրիստոսի Ս. Գերեզմանը կը կատարէ Ս. Զատկի իր Հանգէսը — հանգիսաւոր Ս. Պատարագ և եռաղարձ մեծահանգէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջ:

Իսկ Ս. Զատկին, սկսելով գիշերային ժամը 12ին, երեք աղքերը հետզհետէ — Նախ Յոյնը, ապա Հայը և յետոյ Լատինը — իրաւագանչիւրը իր կարգին, Հինդէն վեց ժամը գրաւելով Քրիստոսի Ս. Գերեզմանը կը կատարէ Ս. Զատկի իր Հանգէսը — հանգիսաւոր Ս. Պատարագ և եռաղարձ մեծահանգէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջ:

Կարձանագրենք Ս. Տեղեաց իրաւակարգին յատուկ այս սովորութիւնները: մեր յարգելի ընթերցողները իրազեկ ընկելու համար, թէ ինչպէս 3-4 միլիոն տառապած ու հալածուած Հայ ժողովուրդը, յանձին Ս. Յակոբեանց Միարանութեան և Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան, կրցեր է իրեն համար աղանուվել այնքան պատուաուրդ դիրք 3-4 հարիւր միլիոն հետեւորդ ունեցող Օրթոսուրդ և Կաթոլիկ հարուստ և զօրաւոր Եկեղեցիներուն կարգին, անոնց հաւատարապատիւ և իրաւակից հանգամանքով մը, Երուսաղէմի Քրիստոնէական մեծագոյն Սրբավայրէն ներս:

\* 19 Մարտ ԲՀ. — Կէսօրէ առաջ, ժամը 9ին, Հոգ. Տ. Հայկազուն Վրզ. Արբանամեան և կալուածական քարտուղար Տիար կարպիս Հինդլեան մեկնեցան նոր Երուսաղէմ կալուածական իշնդրութիւն և կերպարացան 22ին, կէսօրէ վերջ:

\* 20 Մարտ ԳՀ. — Այսօր սկսան Մեծի Պահք

Եկեղեցի գիշերային արարողութիւնները, որոնք պիտի կրկնուին մինչև Ս. Զատիկի, ամէն Երեքշաբթի և Հինգշաբթի իրեկուն։ Խրաբանչիւր Եկեղեցի արարողութեան հետ պիտի կատարուի նաեւ քարոզխօսութիւն Ս. Աթոռի հոգելորհ վարդապետ հայրերու կողմէ։ — Այսօր քարոզեց Դեր։ Տեղապահ Հայրըսուրբը։

\* 21 Մարտ Դէ։ — Այսօր սկսան Մեծի Պահոց Արեւագալի հանգիստաւոր արարողութիւնները, որոնք մասնաւոր հանգիստաւոր պիտի կը ըսկ-նըսկին մինչև Ս. Զատիկ ամէն Չորեքշաբթի և Ուրբաթ օրեր։ Նոյն արարողութիւնը կը կատարուի Մեծ Պահոց բոլոր միացեալ օրերուն և ս, սակայն աւելի թեմին զնացքով մը։

\* 25 Մարտ Կիր։ — Անոնակին, Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հոբետակապետ։ Պատարագեց Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան, քարոզեց Հոգ. Տ. Սուրեն Վրդ. Քէմհաճեան, մէկնարանեալ Անառակին աւետարանական առակը։

\* 26 Մարտ Բէ։ — Եւրօպացւոց Ս. Զատիկի տօնին առիթով Գեր։ Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Տ. Ասողիկ Վրդ. Ղազարեանի և Տիար Կարպիս Հինդլեանի, չնորհաւորութեան զնաց նախ Անկիքան եպօ. Գեր. Սուուարթին և ապա Լուտերականներու ներկայացուցիչներ՝ Տօքթ. Մոլի և Տիար Յ. Միլիքեանի։

— Ի զիմաց Գեր. Տեղապահ Հօր, Հոգ. Տ. Սուրեն Վրդ. Քէմհաճեան ընկերակցութեամբ Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Ղազարեանի զնաց Ֆրանչիկեանց Մարտի համայնքի Գեր. Դիւսթօտին և ապա Լուտինաց Ամեն. Ս. Պատրիարքին։

\* 27 Մարտ Դէ։ — Առաւուեան ժամը 9 ին, Գեր. Տեղապահ Հայրը՝ Միաբան վարդապետներու և զոյտ մը սարկաւագներու ընկերակցութեամբ, չնորհաւորութեան զնաց Ֆրանչիկեանց Միաբանութեան Գեր. Դիւսթօտին և ապա Լուտինաց Ամեն. Ս. Պատրիարքին։

— Խոկ ի զիմաց Գեր. Տեղապահ Հօր, Հոգ. Տ. Սուրեն Վրդ. Քէմհաճեան ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեանի և Երկու բարենարկ սարկաւագաց, չնորհաւորական այցելութիւն տուաւ Յոյն-Հռովմէականներու Հոգ. Տեսչին։

— Կէսօրէ առաջ, ժամը 10.30 ին, Գեր. Տեղապահ Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Տ. Ասողիկ Վրդ. Ղազարեանի և Տիար Կարպիս Հինդլեանի, տեղւոյս Զինուորական Հրամանատարութեան հրաւերին ընդառաջելով, Ներկայ գոնուեցաւ Սպայակոյտի շքանշաններու բաշխման հանգստին, Նորին Վեհափառութիւն Ապտալլա Ա. Թագաւորին կողմէ, Մատունթ-Սպայոսի բանակատեղիին մէջ։ Խոկ կէսօրին ներկայ Եղաւ հաշկերոյթին, զարձեաւ Զինուորական Հրամանատարութեան կողմէ տրուած ի պատիւ Ն. Վեհափառութեան Ռազմայի սրանին մէջ։

\* 30 Մարտ Ուր. — Կէսօրէ վերջ, Գահիրէն Ս. Աթոռ ժամանեց Հոգ. Տ. Գարեգին Արդ. Գաղաննեան։

## ՏԻԱՐ ՅԱԿՈՒՅԱՆ ԵԱՂՈՒԹԵԱՆ

Տիրառիթ պարագայ մը եղաւ մեզի համար Ս. Աթոռիս պաշտօնեաներէն Տիար Յակուման ծաղուաբանի մահը՝ որ տեղի ունեցաւ յտս կարմատի հիւանդութեան, Մարտ 22ին, կէսօրէ առաջ, ժամը 11.45-ին, տեղւոյս Օկոսդա Վիքթօրիա Հիւանդանոցին մէջ։

Հանգուցեալը ծնած էր Այնթապ, 1885-ին առումը առած է Արմաջու Դպրեպանրին մէջ (1897-1903)։ Ուսուցչական պաշտօններ վարած է Այնթապի Վարդանեան կրթարանին, կիլիկիան ծեմարտնին, ինչպէս նաեւ Գաղատիոյ, Անտիոքյ, Անիայ Ազգային Վարժարաններուն մէջ (1903-1914)։ 1915-1918 զինուոր՝ թրքական բանակին մէջ։ 1919-1921 Ուսուցիչ՝ Այնթապի մէջ։

1922-ին կուզայ Երուսաղէմ ուր կ'ընդունուի որպէս պաշտօնեայ Ս. Աթոռոյ դիւնատանց, հետզդետէ վարելով Հայերէն թղթակցութեանց Տնօրին ժողովով և Սին ամսագրի բարտողարութիւնները եւ ի վերջոյ Ելեւմատից Դիւնանի հաշուակալութեան պաշտօնը։

Իր թաղմանական արարողութիւններ կատարուեցաւ Ս. Յակուբեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր եւ մասնակցութեամբ բովանդակ Միաբանութեան։ Ի զիմաց Ս. Աթոռոյ դամբանական խօսեցաւ Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պողաբեան, խոկ զերեզմանատան մէջ ի զիմաց Ս. Աթոռոյ դիւնատանց պաշտօնէութիւնն, խօսեցաւ իր սիրելի բարեկամը եւ պաշտօնէլիցը Տիար Կարպիս Յակուբեան։ Մարմինը ամփոփուեցաւ Զամ-թաղի զերեզմանատան մէջ։

Ուղղամիտ, բժանինդիր ու նշանապահ էր զործելակերպով։ Իր մանով բաց մը կը մնայ Ս. Աթոռիս դիւնական յարկէն ներս, խոկ իր բարի ու զուարթամիտ բնաւորութեամբ սահեծած էր իր շուրջ համականը շրջանակ մը, որուն համար երկար ատեն առ պիտի մնայ իրբեւ յաւէտ կորսուած արժանիք մը։

Կ'աղօթենք որ Տէրը լուսաւորէ իր հոգին եւ շնորհէ իր մխիթարութիւնը ի մօրէ եւ այժմ ի հօրէ եւս որբացած իր երկու դուստրերուն ու պարման զաւակին։

